«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Համընդհանուր ներառում
ԱՌԱՐԿԱ	Դասավար
ՀԵՂԻՆԱԿ	Ռուզաննա Հովհաննիսյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ծաղկահովիտի Ավ.Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..

Գլուխ 1

Ի՞նչ է համընդհանուր ներառումը……..

Համընդհանուր ներառումն ու խտրականությունը……..

Համընդհանուր ներառման մարտահրավերները……

Գլուխ 2

Համընդհանուր ներառումը Հայաստանում……..

Համընդհանուր ներառման առավելություններն ու դժվարությունները…

Եզրակացություն……..

Գրականության ցանկ

Ներածություն

Հետազոտության արդիականությունը:Համընդհանուր ներառումից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է:

Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը:

Համընդհանուր ներառումը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:Համընդհանուր ներառումը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական

պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Հետազոտության նպատակը: Հայաստանի հանրապետությունում համընդհանուր ներառման իրականացման պարզաբանումն է:

- **Հետազոտության խնդիրները:** Ուսումնասիրել հիմնախնդրին վերաբերող մանկավարժական գրականությունը:

Հստակեցնել համընդհանուր ներառման իրականացմանը առնչվող խնդիրները:

Գլուխ 1

Ի՞նչ է համընդհանուր ներառումը

Համընդհանուր ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Համընդհանուր ներառումը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Համընդհանուր ներառումը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը:

Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:

Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է սովորողների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար:

Համընդհանուր ներառման անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով։ Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը)։

Համընդհանուր ներառումն ու խտրականությունը

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Համընդհանուր ներառման մարտահրավերները

Համընդհանուր ներառման համակարգի զարգացում, բոլոր սովորողների լիարժեք մասնակցություն, հավասար հնարավորությունների ստեղծում և անհատական մոտեցումներ:

- Համընդհանուր ներառման լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես

առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք։

- Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն։ Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը։

- Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում։ Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում։

- Համընդհանուր ներառման նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից։ Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար։

- Համընդհանուր ներառումը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և գիտակից աշխատեն՝ Համընդհանուր ներառման նպատակներին հասնելու համար։

Երեք քայլ, որ տանում է դեպի իրական Համընդհանուր ներառման

- Թե ինչ խորությամբ է առանձին սովորողը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով։ Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ սովորողի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում։

- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր սովորողների թերությունները, այլևս չի դիտարկվելու։ Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր սովորող կարող է սովորել և ստեղծագործել։ Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր սովորող կարողանա սովորել և ստեղծագործել։ Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր սովորողի ներուժը և կարողությունները։

- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը համընդհանուր ներառման որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին։ Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում։ Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում։ Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ։ Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ։

Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից։ Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն։

Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում։ Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է։

Գլուխ 2

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության հատուկ կրթության համակարգը ձևավորվել է դեռևս խորհրդային շրջանում: Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը սկսվել է «ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին հռչակագրին» միանալուց հետո: 1996 թվականին ընդունվեց «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 1999-ին՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, 2001-ին՝ «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր» ՀՀ օրենքը, 2005-ին՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին: Օրենքում ամրագրված է, որ <<կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով>>:

Համընդհանուր ներառման շնորհիվ մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներ ունեցող երեխաները հնարավորություն են ունենում սովորել հանրակրթական դպրոցներում ոչ հաշմանդամ երեխաների հետ համատեղ:

Համընդհանուր ներառումը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե համընդհանուր ներառման մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Հատուկ կարիք ունեցող երեխաների հոգեկան զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրմամբ, նրանց կրթության և դաստիարակության հարցերով լրջորեն զբաղվել է նշանավոր գրող և մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանը: Նրա կարծիքով այդ երեխաների կրթումն ու դաստիարակությունը, նրանց նկատմամբ հատուկ ուշադրությունը մեծ նշանակություն ունեն ոչ միայն հենց այդ երեխաների, այլև ամբողջ հասարակության դաստիարակության համար, քանի որ <<եթե մարդկային ցեղի մեջ թշվառություն չլիներ, ապա և ոչ կարեկցության զգացմունք կլիներ>>:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին: Օրենքում ամրագրված է, որ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով:

Հանրակրթական համակարգին զուգընթաց հատուկ կրթության բարեփոխման ծրագիրը ևս հիմնված է հիմնարար երկու՝ կրթության մատչելիության և որակի սկզբունքի վրա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսանկյունից դա ենթադրում է հավասար պայմանների ստեղծում և նրանց կարիքին համապատասխան՝ որակյալ կրթության հնարավորություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներկայումս ՀՀ կրթության և գիտության համակարգում գործում է 24 հատուկ դպրոց և մեկ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն:

Հատուկ հաստատությունների համակարգի բարեփոխումները նպատակ ունեն.

- կատարելագործելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և խնամքի համակարգերը,
- նպաստելու գիշերօթիկ հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելուն,
- կանխարգելելու հատուկ հաստատություններում ընդգրկված երեխաների թվի աճը:

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ուղղություններն են.

- հատուկ հաստատությունների համակարգի կառուցվածքային բարեփոխումներ,
- հատուկ հաստատությունների ղեկավարման և ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխում,
- հատուկ հաստատություններում իրականացվող ծառայությունների ապակենտրոնացում,
- հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավում,
- հատուկ հաստատությունների ընդունելության համակարգի կատարելագործում:

Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, ընդունվել է նաեւ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» ՀՀ օրենքը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում /25.05.2005/.

- սահմանված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կատեգորիաները, որտեղ չկան նախկինում ամրագրված որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների և արտակարգ ունակություններ ցուցաբերած երեխաների կատեգորիաները,

- ամրագրված է, որ երխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը վկայագրում է տարածքային կառավարման պետական մարմինը,
- ամրագրված է «ներառական կրթություն» հասկացությունը,
- ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրա համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ համատեղ՝ հանրակրթական դպրոցում: Նշված դրույթն ամրագրված «Կրթության մասին» ՀՀ օրենքում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերովե 19 հոդված, կետ 3: Համընդհանուր ներառման քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Մեթոդի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատումն է և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը: Մեթոդի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավված են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ հոգեբան, լոգոպեդ), երեխայի ծնողը և թիմի համակարգողը: Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի ուսուցման անհատական պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը:

Այսպիսով, մեթոդը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հասակակիցների հետ համատեղ հանրակրթական դասարանում՝ անհատական պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության համակարգում գործում է 52 հատուկ դպրոց, որոնցից 18-ը՝ մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներով երեխաների համար, 14-ը՝ ինտեգրացված ուսուցման(մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներով և որբ ու ծնողական խնամքից զրկված երեխաների համար) , 12-ը՝ ուբ և ծնողական խնամքից զրկված երեխաների համար, 8-ը՝ արտակարգ ունակություններ ցուցաբերած երեխաների համար:

Նշված 52 հաստատություններում սովորում են 11500 երեխաներ, գիշերում է 4000 երեխա:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչու է անհրաժեշտ սահմանափակ կարողություններով երեխաներին ներառել հանրակրթական դպրոցում և ի՞նչով է դա արդարացված:

Խորհրդային տարիներին հաշմանդամներն ամբողջությամբ մեկուսացված էին հասարակությունից: Երեխաները հիմնականում պահվում էին համապատասխան հաստատություններում: Այնինչ, երեխաների մեկուսացումը դանդաղեցնում է նրանց ֆիզիկական, հուզական, իմացական զարգացումն ու հասունացումը: Իսկ փորձը հաստատում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները շրջապատում ավելի արագ են ինտեգրվում, քան ապրելով մեկուսացված միջավայրում կամ էլ իր նմանի հետ: Նրանք դառնում են ավելի վստահ ու անկաշկանդ, քան հատուկ գիշերօթիկներում կրթված երեխաները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձը ցույց է տալիս, որ սահմանափակ ունակություններով երեխայի համար հիվանդության ախտորոշման և այլ դիտարկումների վրա պետք է մշակվի անհատական ծրագիր: Բայց, ամեն դեպքում, մտավոր զարգացման շեղումներ չունեցող երեխաները հանրակրթական դպրոցներում հատուկ պայմանների ստեղծման դեպքում կարող են իրենց հասակակիցների նման սովորել, հաղորդակցվել և զարգանալ:

Սակայն, սա հարցի միայն մի կողմն է: Համընդհանուր ներառման իրականացումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Անհրաժեշտ է ոչ միայն հասարակության մտածողության վերափոխում, այլև հանրակրթական դպրոցներում որոշակի պայմանների ստեղծում: Օրինակ՝ անվասայլակ օգտագործող երեխաների համար անհրաժեշտ է դպրոցի ներսում ստեղծել հատուկ թեքահարթակներ կամ վերելակներ: Բացի այդ, փորձը ցույց է տվել, որ հանրակրթական ծրագրերը բարդ են այդ երեխաների համար: Համեմատաբար թույլ է նրանց հիշողությունը և ընկալման կարողությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել նաև հատուկ հեշտացված ծրագիր:

Հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաների կրթելու դժվարությունը կայանում է նրանում, որ նրանց մոտ համեմատաբար թույլ է հիշողությունը և գիտելիքը յուրացնելու ունակությունը: Ոչ մի դեպքում չի կարելի ստիպել կամ շտապեցնել նրանց:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցման գործում թեպետ անուղղակի, բայց կարևոր ներդրում ունեն նաև նրանց համադասարանցիները: Դասարանի կարծիքը շատ մեծ ազդեցություն ունի նրանց վրա: Եթե նույնիսկ հաշմանդամ երեխաները հատուկ գիշերօթիկ հաստատություններում շրջապատված են մասնագետներով, համապատասխան խնամքով, միևնույնն է, իրենց շուրջը հիվանդություն են տեսնում:

Առանց այս խնդիրների լուծման ներառական կրթություն իրականացնելն անիմաստ է և անօգուտ:

Գրականության ցանկ

Համընդհանուր ներառման իրականացման ուղեցույց.

Համընդհանուր ներառման ուումնամեթոդական ձեռնարկ 2017թ.

Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2005թ

Միավորված Ազգեր, 1989թ

Ժոմտյենյան դեկլարացիա 1990թ

https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu

https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166